

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/4**

**5 փետրվարի 2014 թ.**

Քննարկվեց «Մանուկյան կոնյակի գործարան» ՍՊԸ տնօրենի (այսուհետ նաև դիմումատու) 30.01.2014 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի 20.01.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 246431 որոշման դեմ:

**«Մանուկյան կոնյակի գործարան» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

Ըստ գանգատի, 2013 թ-ի նոյեմբեր ամսվա էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման ժամանակ ի հայտ է եկել սխալ՝ կապված նույնականացման քարտի հետ, որի պատճառով հնարավոր չի եղել հաշվետվությունները ժամանակին ներկայացնել: Այդ մասին 19.12.2013 թ-ի թիվ 17368-13 նամակով դիմումատուն հայտնել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին՝ կից ներկայացնելով սխալի նկարագրության տեղեկագիր: Սակայն, 24.01.2014 թ-ին Կոտայքի ՏՀՏ-ից ստացվել է նամակ, որով հայտնվել է 20.000 դրամի վարչական տուգանքի ենթարկելու մասին:

Գանգատի համաձայն, դիմումատուի կողմից Կոտայքի ՏՀՏ է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին ուղարկված նամակի պատճենը, սակայն նշված հանգամանքը հաշվի չի առնվել վարչական տուգանք նշանակելիս:

Ելնելով վերոգրյալից՝ դիմումատուն խնդրում է անվավեր համարել ՀՀ ԿԱ Կոտայքի ՏՀՏ կողմից 16.01.2014 թ-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 93 արձանագրությունը, ինչպես նաև դրա հիման վրա կազմված 20.01.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 246431 որոշումը:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի կողմից 20.01.2014 թ-ին կայացվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 246431 որոշումը, որի համաձայն «Մանուկյան կոնյակի գործարան» ՍՊԸ տնօրենը 2013 թ-ի նոյեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվակը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամ:

Քննարկման ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ մինչև վարչական վարույթի սկսելը՝ 19.12.2013 թ-ին, դիմումատուն 2013 թ-ի նոյեմբեր ամսվա էլեկտրոնային հաշվետվության ներկայացման ժամանակ ի հայտ եկած խոչընդոտի

վերաբերյալ, որի պատճառով հնարավորություն չի եղել օրենսդրությամբ սահմանված ժամկետում ներկայացնել համապատասխան հաշվետվությունը, գրությամբ հայտնել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

Հանձնաժողովը գտնում է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված խախտման առկայության համար անհրաժեշտ է, որպեսզի ընկերության համապատասխան պաշտոնատար անձի կողմից զանցանքը կատարված լինի մեղավորությամբ: Հետևապես սույն գործով իրականացվող վարչական վարույթի ընթացքում նախ պետք է պարզվեր դիմումատուի վարքագծում մեղքի առկայության փաստը, ինչը սակայն, քննարկվող դեպքում չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ էլեկտրոնային ստորագրության հավաստագրի փոփոխությամբ պայմանավորված խնդիրների հետևանքով օրենսդրությամբ սահմանված ժամկետում հաշվետվություն չներկայացնելը չի կարող առաջացնել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվություն, քանի որ զանցակազմը լիարժեք չէ՝ արարքի սուբյեկտի կողմի մեղքի բացակայության պատճառով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի 20.01.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 246431 որոշումը, իսկ գործը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ